№ 21 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍ 10 — 1895 — ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍ 10 № 21

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրամ, կէս տարուանը 6 դրամ։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլ. կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։ Ի Արտասահմանից փոխի համար պէտք դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չե 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լաւ չէ միշտ մարակնել պէտք է քիչ էլ սովորեցնել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ղազվինից. Նամակ Ռաշտից. Բաց նամակ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — Յայտարարութիւններ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անկարգութիւններ Պ. Ճեմարանում։

«ԱՒԱՒ ՉԷ ՄԻՇՏ ՄՏՐԱԿԵԼ ՊԷՏՔ Է ՔԻՉ ԷԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ»

Այդպէս է գրում մեզ՝ մեր բարեկամներից մէկը։

Ի՞նչ է նշանակում տարրացնել լաւը. չէ՞ որ դա նշանակում է վերացնել այն ամենը, ինչ որ վատ է, ինչ որ վնասակար է կամ չար։ Տարրացնել մի լաւ օրէնք, այդ նշանակում է մշակել մի նոր հաստատութիւն, որի շնորհիւ կարելի՝ ինի ոչնչացնել մինչև այդ ժամանակ գործածուող այնպիսի դրութիւններ կամ օրէնքներ, որոնք իրենց հնութեամբ կամ ժամանակի ու ժողովրդի ներկայ պահանջներին անհամապատասխան ոգովը, շարունակելով ազդեցիկ լինել,—առաջացնում են վնասակար արդիւնք։

Երբ մենք, օրինակ, ասում էինք որ «Արձակենք գոնէ գիտութիւնը կղերի ազդեցութիւնից», այդ, շատ հասկանալի կերպով, առաջացնում է այսպիսի մի ուսուցումն. Ազատ պէտք է պահել կրթութիւնը այն դասակարգի ազդեցութիւնից, որ աղաւաղելով նրան՝ գոյացնում է պղտոր ջուր և նրա մէջ որսում է ստամոքսին հարկաւոր ձկները։ Այդպէս ասելով մենք առաջ ենք մղում մի ուսուցում, որ կամենում է դուրս շրջարտել հայ կղերին այն ասպարէզներից, ուր նա տեղ է բռնել անպատիժ կերպով, և դարբնում է ամեն ինչ իր դասակարգական շահերի համաձայն, աղաւաղելով գիտութիւնը, ուր նա դարերի պատմութիւնովը ապացուցեց, որ միմիայն շրջանների է ենթարկում մարդկային պրօգրէսը և ժողովրդի թշուառութեան ու տգիտութեան վրայ է կառուցանում իր գոյութիւնը։

Երբ մենք մտածում ենք հայ հոգեւոր բարձր իշխանութիւնը, որ կրթութեան գործը խաղալիք և ուսումնարանները անկելանոցներ են շինում—դրանից բղխում է ինքնըստինքեան այն ուսուցումը, որ հարկաւոր է դուրս գալ ծթուած տիրացուական նախապաշարումներից, և աշխատել ամենայն ոյժով դուրս շպրտելու կրթական հաստատութիւններից կրօնական այն ազդեցութիւնը, որ շարունակում է նեխած դրութեան մէջ՝ փտեցնել մեր հասարակական օրգանիզմը և պատրաստել մեզ համար սիսոլաստիկական ոգով կրթուած անպէտք քաղաքացիներ։ Կղերական այդպիսի ոտնձգութիւնների, այդպիսի աւերածութիւնների կամ ազդեցութեան դէմ խօսելուց ծագում է այն ուսուցումը, որ տարիներից ի վեր մեր ոգին, մեր միտքը, մեր քայլերն ու զարգացումը ճնշող այդ դասակարգին՝ հարկաւոր է մղել և իր սահմանների մէջ ամփոփել, հարկաւոր է մեր հասարակական—ժողովրդական գործերը ազատել նրանց ձեռքից ու կօնտրօլից և հասկացնել նրանց որ այլ ևս չեն կարող անպատիժ կերպով պարազիտ լինել, մեր հիւթը ծծել, մեզ համար խաւար դարբնել, մեր միտքն ապականել, մեր աճմանը, առաջադիմութեան արգելք դառնալ, մեզ ճնշող ցանցը թանձրացնել և մեր քրտինքով—արիւնով ստացած քրտինքովը—փոր ուռցնել։ Մեր հարուածները ուրեմն ուսուցանում են որ այս կամ այն դասակարգն ու հասարակական դրծանիքը հարստահարում են մեզ, արգելք լինում մեր մտաւորական աճման, առաջխաղացութեան, առաջանում են մեր հիւթովը, մեզ լիմարացնում, մեզ ոչնչացնում, ուրեմն և հարկաւոր է ոչնչացնել բոլոր այդ ապականիչ, խաւար պատրաստող և մեզ վնասող տարրերին, լինէին նրանք անհատներ, խմբեր կամ դասակարգեր, լինէին նրանք դարերից, ի վեր նեիրական, սուրբ համարուածներ և կամ թէ նրանցից բղխած օրէնքներ, սովորութիւններ ու աւանդութիւններ, որոնք անշուշտ դրոշմուած են լինում նրանց գոյացնող տարրերի ապականիչ, խաւարային ու յետադիմական ոգովը...

Ուրեմն, եթէ մենք մտածում ենք և հարուածում, մենք միանգամայն սովորցրած էլ ենք լինում։ Որովհետև, ինչպէս ասում է Պլատոնը, Ոչնչացնել չարը՝ նշանակում է թագաւորեցնե բարին։

Հ. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱԶՎԻՆԻՑ

22 մայիս 95

Երբեմն մարդ կարծում է որ տարաձայնութիւնը ծագում է ձայների շատութիւնից էլ, բայց եթէ Ղազվին գայ, ապացոյց կունենայ որ երկու ձայն ընդունակ են իրենց տարաձայնութեամբ շատ աւելի ականջ քերթել քան մի խումբ, ուր գոնէ երկու միաձայն երգողներ կարելի է գտնել։

Երբ Ղազվին հասայ, յոյս ունէի այստեղ բնակուող փոքրաթիւ (10—12 տ.) հայերի մէջ գոնէ տեսնել այն արդիւքը, որ առաջ է գալիս ներդաշնակութիւնից։ Քանի անգամ «Շաւիղը» հաղորդել է որ «Ղազվինի դպրոցը վերաբացուեց, որ «ժողովներ եղան» և այլն և այլն, բայց բանից դուրս է գալիս որ այդ եղած դպրոցը գտնուել է մի խնայտառակ դրութեան մէջ, իսկ ժողովները կռիւների, անձնական կրքերի ցուցահանդէսի ասպարազ, եկող տարի Ղազվինը այդ էլ չի ունենալ, դպրոցը բզկտուել է և ժողովները այնքան ձանձրացել են, որ էլ ոչ ոք նրանց անունը լսել չէ ուզում։ «Հասարակական գործը» դառել էմի հասկացողութիւն որ հաւասարվում էխաթաբալա, «մարդի ի զուր ժամանակը կորցնող գործ» խօսքերի և կազմել է մի այն գաղափարը, որ «խելօք մարդը այդպիսի գործերից հեռու պիտի կենայ»։

Էլի մի անգամ տեսայ այս քաղաքում մի խումբ հայեր, որոնք միմեանց հետ անհաշտ, միմեանց չը հաւանող և միմեանց հետ գործելու փափակ չունեցող մարդիկ են երևում, բաժանուած քանի հայ կայ՝ այնքան կուսակցութեան, քանի հայ կայ՝ այնքան կապրիզների, այնքան էլ անձնական կռիւների։ Չը պէտք է, նախ, կարծել որ հայերի քչութեան պատճառով, դպրոց իսկ եթէ լինի, վարժապետի կամ այլ ծախսերի դրամ չէ կարող գոյանալ։ Ոչ. քաղաքում եղած օտարականների նէրները, եկեղեցւոյ եկամուտը բաւական են 10—12 աշակերտ ունեցող դպրոցի ծախսերի համար և պիտի ասել որ օգնող օտարականները տուատաձեռն են և երբէք չեն մերժել անել այդ մասին ինչ կարող են,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՖԻԼՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նորին Վեհափառութեան ա.տ. Մկրտչի Ա. Արքազնագոյն Կաթուղիկոսին ամենայն հայոց

ՉԵԿՈՒՑՈՒՄՆ

Խորին վշտով և խոցած սրտով թողնելով այն սուրբ ուսումնավայրը, որտեղ անցել են մեր պատանեկութեան քաղցը տարիները և որի բարիքները վայելելով հանդերձ՝ ուխտել ենք անմոռաց պահել նրա երջանկայիշատակ հիմնադրի ս. անունը, միանգամայն մեր սուրբ պարտականութիւնը համարելինք, իբրև այդ կրթական հաստատութեան հարազատ բարեկամներ և հարազատ սրտացաւ մտերիմներ, հաղորդել Ձերդ Վեհափառութեան մի քանի տարիների ընթացքում մեր ստացած տպաւորութիւնները, որոնց ազդեցութիւնը խորը դրոշմով մնացել է նախկին ուսանողներիս իւրաքանչիւրի բնաւորութեան վրայ։ Ունենալով յայտնել վստահութեամբ այդ հաստատութեան մէջ, մեր տեսածն ու զգացածը, չենք կարող չը խոստովանել՝ մաքուր խղճով հանդարտ մարով՝ դառն ճշմարտութիւնը, որ իրօք վնասեցնող և վիրաւորական պէտք է լինի ճեմարանի վարչութեան և խնամատարների համար։ Թէև միանգամայն ցաւալի է, բայց և այնպէս մեր պարտքն է շատերի հետ կրկնել, որ ճեմարանը չէ ծառայում մեծ հիմնադրի նախորոշած նպատակին, շնորհիւ այն վարիչների, որոնք շահադիտական և նեղկուսակցական տեսակէտներից նայելով այդ հիմնարկութեան դեկավարութեան վրայ, շեղել են նրան իր կանոնաւոր ընթացքից և առաջուց գուշակել չէ կարելի թէ մինչև ուր կը հասցնեն գործը։ Մենք հեռանում ենք այստեղից մտայն և տխուր տպաւորութիւնների տակ, որոնք երկար ժամանակ մեզ կը յիշեցնեն այն անկարգ և աննախանձելի վիճակը, որի մէջ դժբաղդութիւն է ունեցել ճեմարանը գտնուելու շատ տարիների ընթացքում։ Եթէ մինչև այսօր ճեմարանաւարդ նախկին սաները մտերմութիւն դէպի բարոյական կրթութեան ազբիւրը կամ երախտագիտութեան մի խոշոր դրատական դէպի իրենց բարերարի յիշատակը չեն ներկայացրել՝ իրենց երախտագիտութիւնը արտայայտած լինելու համար՝ դրա պատճառը միմիայն այդ կրթական հաստատութեան սաների մտաւոր և բարոյական դաստիարակութեան սխալ ընթացքն է եղել և է մինչև այսօր։ Մեզ համար շատ հասկանալի է այդ վհատեցնող երևոյթի իսկական պատճառը։ որովհետև երկար ու ձիգ տարիների ընթացքում ապրելով ճեմարանի թմրեցնող մթնոլորտում, անձամբ վերահասու ենք եղել նրա յառաջանալուն։ Ներկայումս դժուարութեամբ կարելի է ցոյց տալ մի դպրոց, ուր տեղի ունենային այնպիսի անկարգութիւններ և աչքի ընկնող տգեղ փաստեր, որպիսիներն անպակաս են ճեմարանի մէջ։ Եւ իրաւ, որ բարեկարգ դպրոցումն է աշակերտը բողոքել իր տեսչի դէմ, որ կանոնաւոր հիմնարկութեան մէջ է նկատուած, որ սաները տրտունջներ, գանգատներ և աղերսներ ուղարկէին բարձր իշխանութեան՝ իրանց ատած ուսուցչին, չափ ու սահմանը չը ճանաչող վերակացուին, կամ մի այլ անկարգ պաշտօնեայի հեռացնելու կամ զգուշացնելու համար. ինչու պէտք է ուսանողը ատելութիւն տածէ դէպի իր բարոյագէտ ու քաղաքավարի ուսուցիչը, եթէ վերջինս իր հեղինակութիւնը նւազեցնող և յարգը ստորացնող վարմունքներ չի

վերջերումս է որ նրանք էլ լուսահատուել են և մի կողմ են ուզում քաշուել: Դրա փոխարէն, մի ինչ որ պարոն Սիմէօնն, որ վարժապետ չունեցող մի դպրոցի տեսուչ լինելու է ձգտում և որ եթէ իր հեղինակութիւնը չէն ճանաչում, ամեն ինչ տակն ու վրայ է անում, այս տարի կրթական գործի հետ ուղղակի խաղեր էր սարքում, ոչ ուրիշին է թողնում գործելու և ոչ էլ ինքն է գործում. համարձակութիւնը այն աստիճանի է հասցնում, որ մի գեղեցիկ օր էլ եկեղեցւոյ դուռն է կողպէկում և բանալին տանում տուն, որ ինչ է, իր տեսչական իշխանութիւնը չընդունող ուսուցիչը եկեղեցի ոտք չը դնէ: Եւ ահա մի քանի երիտասարդներ բռնի ոյժով մտել են պ. Սիմէօնի մօտ, խլել բանալին, ծեծել մի քիչ էլ և այլն և այլն:

Այսպիսի շատ դէպքեր, գանգատներ, երբեմն շատ չնչին, երեխայական պատմութիւններ է որով լցնում են ձեր ականջը երբ սխալմամբ հետաքրքրվում էք նրանց ազգային գործերով: Ասենք նրանց ցաւերն էլ դրանք են, ինչ անեն, եղածն են պատմում: Պատմում են որ վարժապետը չորս ամսւայ մէջ հազիւ 10 թուման ռոճիկ է ստացել, որ վերջերս այնպէս բարկացել էր որ եկողին խփում-փռում էր գետին, որ առաջները լաւ էր, բայց այս տարի միշտ որսի էր գնում. որ շատերը դպրոցի այդ խայտառակ դրութիւնից յուսահատելով իրենց տղայոց ուրիշ քաղաքներ են ուղարկել, որ Ղազվինում էլ դպրոց չի բացւիլ... և հազար ու մէկ այդպիսի բաներ. ուշ միտն է, որ պատմի ամեն ինչ. այդ բոլոր պատմուածները ցոյց են տալիս, որ Ղազվինումն էլ կրթութեան գործի վրայ—յաճախ ինքնիշխան կամ ո և է հանգամանքի շնորհիւ—սլետ են եղել այնպիսի ապիկարներ, որոնցից այս րոպէիս մի քանի հատ կան ձեր—Թէհրանցոց հոգաբարձական ժողովի մէջ: Բայց ի հարկէ Ղազվինում ոչ հոգաբարձութիւն կայ և ոչ ժողով: Ի՞նչ էք ուզում լինի մի բուս, գանգատ կողմերից հաւաքւած, գանգատ գաղափարներով անձերի մէջ, որոնք շատ-շատ կիրակի օրերը հաւաքւեն եկեղեցոյ բագը, խաղալու սկսս խորհին, յետոյ կուրին, միմիանց քիչ հայհոյեն և վերջ ի վերջոյ էլ ցրւին ու թողնին որ ամեն ինչ ընթանայ այնպէս «ինչպէս որ կարող է»... Մի ուսուցիչ ունէին, այն էլ տարւայ վերջին էլ չը սպասած, առանց քնոտութեան, թողել հեռացել է. աշակերտները ցրւել են: Ասենք դպրոցը, իր գոյութեան ժամանակն էլ մի բան չէ եղել: Մի այցելու պատմում է, որ նա ներկայացնում էր մի խոնաւ սենեակ մի ետ ընկած պարսկական քարվանսարայում և երբ այցելուն մտել է, դասարանի պատից կախւած է տեսել նաև ուսուցչի.. վարդիկը...

Ղազվինում բնիկներ մի քանի տուն են և շիրաչիներ են—ինչպէս շատ ուրիշ պարսկահայ քաղաքներում և Թէհրանում իսկ—կան օտարականներ, այսինքն Թավրիզեցի-ղարադաղցիներ որոնք զանազան առևտրական գործակալութիւններ են և այլն:

Վ. Փ.

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

27 մայիս 95

Տարին մի անգամ միայն արժէր այնքան ընդարձակ գրել Ղազվինի հայերի մասին, որքան ես գրել էի անցեալ նամակովս. յետոյ էլ մի քանի լուրեր երբեմն... և բաւական է: Այդպէս չէ կարելի վարւել ի հարկէ Ռաշտի հետ. այստեղ, նախ, 60 տուն հայեր կան, որոնք գտնւելով բարեյաջող, օժանդակիչ հանգամանքների հոսանքի առջև, կամ պիտի զարգանան որ գոյութիւն ունենան և կամ ոչնչանան: Եւ ռաշտեցին սկսել է ոչինչ չը խնայել իր որդու կրթութեան համար, սիրում է կրթիչ հաստատութիւնները և յարգում նրանց, որոնցից նա սպասում է լուսաւորութիւն և որոնց նա յանձնում է իր քաղաքակրթող հիմնարկութիւնների ղեկը: Չը նայելով որ այդ 60 տնից մեծ մասի տէրերը շիրաչիներ են, բայց նրանք այն կեղտոտ տիպարը չեն ներկայացնում, որոնցից շատ կարելի է հանդիպել Պարսկաստանի այլ և այլ քաղաքներում: Մի խօսքով. այստեղ ուրեմն չէ պակասում գործ, ոչ էլ տնտեսական միջոց, այլ ինչպէս պարզ երևում է, պակասում են բարեխիղճ, ազնիւ գործողներ: Դրա փոխարէն, մի քանի ազգներ—մի Ծատուր կամ մի Աղաւէլ, իրենց անձնական քէֆի խաղալիք են դարձրել դպրոցը, իրենց ստերն ասակ գալաբուղ, տղայութիւնը շոյող—փալփայող ապիկար ուսուցչուհուն և ուսուցչին պաշտպան հանդիսանում և արդելք լինում, որ դպրոցը կարողանայ փաքր ի շատէ կանոնաւոր ուսուցիչներ ունենալ և ազատւիլ տիրացուական, թոզ փչելու գործարան դառնալուց:

Տարեկան միայն 1000 բուբլի տրվում է այդ ապիկար ուսուցիչներին, որոնցից մէկը Երևանի դպրոցի երկրորդ դասարանից վռնտւած, բազազխանայի պրիկաշչիկի ապաւորութիւն է թողնում, իսկ միւսը գաւառական բեմից ցած իջած յայտնի դերասանուհի տիկին Սարգսեանցն է, այդ վարժուհին ամենքը գիտեն—երկու տող գրել չը դիտէ իսկ իրը ձեռագործ՝ միմիայն ծոպեր (դանտել): Դրա փոխարէն, քոյր և եղբայր, ձեռք ձեռքի տւած և Ծատուր կամ Աղաւէլ աղաների շուրջը պար բռնած, մանուկներին մատակարարում են Երևանի փողոցներում երգւող փողոցային թուրքերէն երգեր և պարեր: «Շաւիղ» № 17-ով հաղորդած լուրը նրանց մասին ոչ միայն ճիշտ էր, այլ և դեռ մեղմացրած: Ուսուցչին խօսեցրի և նա դեռ պարծանքով էլ էր որ պատմում էր իր խալֆայութիւնը. թէ ինչպէս Զատկի օրերը նրանք աշակերտներին և աշակերտուհիներին տանում են մի քանի աղաների տուն, իրենց սովորացրած երգերը երգել տալիս և փող հաւաքում: Երբ բնականաբար ես ուսուցչին պախարակեցի նրա այդ զզւելի ընթացքի համար, նա սկսեց պատճառաբանել, որ այդ աղաները դպրոցին նւէր են տալիս միշտ և որ հարկաւոր էր նրանց այդպէս խնկարկել: Աղաները շփացած այդ գծուծ ցոյցից, գտել են որ այդպիսի ուսուցիչ և ուսուցչուհի չեն կարող լինել, իսկ մի յայտնի անձնաւորութիւն նախ մերժել է ընդունել և ապա, երբ նորից խնդրել է ուսուցիչը, նրանց մի շատ սառն ընդունելութիւն է արել: Այս բոլորը դեռ ուսուցչի, այսպէս ասած, հասարակ սխրագործութիւնն է. հարցրէք օրիորդաց դպրոցի դպրոցականներից և առ հասարակ շատ ուշ եղիներից. ինչեր ասես որ չը պատմեն. ասում են որ կիրակի օրերը գինի, օղի, փող են հաւաքում, օրիորդաց դպրոցի բագում աշակերտների և աշակերտուհիների հետ թրքական երգեր երգում, պարեր սարքում և այդ բոլորին ներկայ դաձնում ուսուցչի մի քանի թուրք երիտասարդ աշակերտները: Ես ուրիշ դէպքեր չեմ պատմում, եթէ հարկը պահանջի, լոյս ունիմ որ Ռաշտում կը գտնւեն ճշմարտախօս մարդիկ, որոնք փաստեր շատ ներկայացնեն: Փաստը այն է, որ պ. Բագրատ Սողոմոնեանն ու իր քոյրը, ապատ ասպարէզ գտած (որովհետև ոչ մի կրթական վերահսկող չը կայ), թիկունք ունենալով մի քանի աղաներ, անպատժելիօրէն հարստահարում են կրթութեան գործը:

Պակաս ապիկար չէ հանդիսանում նաև Ռաշտի քահանան, որ այժմ, թողած Ռաշտի հովւութիւնը, թափառում է Մէշէդիսերի անտառներում, այնտեղ գտնւող մի քանի հայերից էլ աջահամբոյր գրփելու համար: Եռայի եպիսկոպոսի ձեռնագրածներից ամենալաւն է սա, որի համար ամենքը միաբերան ասում են որ փողի համար պատրաստ է ամեն ստորութիւն յանձն առնել:

Ինչպէս տեսնում էք, գործ կայ, նիւթական միջոցն էլ բաւական է (1000 բուբլիով շատ լաւ ուսուցիչ և ուսուցչուհի կարելի ունենալ մօտիկ Կովկասից). ժողովուրդը ուսումնասէր է, Թէհրանցոց պէս իրը աւելորդ պերջանք չէ համարում ուսումը., բայց ինչ արած որ գործողները ապիկար են, մի քանի աղաներ ասպարէզն են ապականում և իրենց աղայական քմահաճոյքի համար ապագայ սերնդի կրթութեան գործը իրենց շուրջը քծնողների ձեռքը թողնում:

Ռաշտում ինտելիգենտ մասը կազմում են մի քանի զանազան կողմերից հաւաքւած երիտասարդներ, որոնք շատ աւելի աշխոյժ ունին, շատ աւելի կեանք, քան այդդեղ—Թէհրանում եղող մի խումբ քացախած բանկի պրիկաշչիկները, ու և յայտնի է Զերդ Վեհափառութեանը. դոցա շնորհիւ էր, որ ճեմարանի սաներն «անկրօն», «անաստուած», «անբարոյական» և այլ ածականների տէր հռչակւեցին: Սակայն այդ կործանիչ ուղղութիւնը երկար տիրապետել չէր կարող. որովհետև վարչութեան և ուսանողութեան երկուստէք ատելութիւնն ու թշնամութիւնը վերջին ծայր լարման էր հասել. ապալուց այդ սխալ ուղղութիւնը իր առաջնորդով հանդերձ և տեղի ուց մի թարմ և նոր վարչութեան, որ իր ղեկավարութեան առաջին օրից սկսւած մի համակրելի մտերմութիւն և սերտ բարեկամութիւն հաստատեց ուսանողների, աշակերտների և վարչութեան մէջ: (Սա սրբազան Սեղբակեանի կարճատև տեսչութեան ժամանակամիջոցն էր):

(Կը շարունակուի)

ցոյց տալ, ինչու. պէտք է սուր թշնամութիւն մտած լինի մի հաստատութեան բարձրագոյն վարիչների և ստորադրեալ անդամների մէջ, եթէ իւրաքանչիւրը իւր պարտականութիւնների, իրաւունքների և հեղինակութեան չափ ու սահմանը սկզբից արդէն որոշած ունի:

Մեղադրել աշակերտներին կամ ուսանողներին այդ թերութիւնների համար և անուանել նրանց անխտիր—«ըմբոստներ», «լրբեր»,«անամօթներ», «ճեմարանը ապականողներ», «անպիտաններ՝ բառիս բուն նշանակութեամբ» և այլն, դա նշանակում է միանգամայն չը հաւատալ դաստիարակութեան և կրթութեան բարերար ազդեցութեանը, որին ակնածութեամբ է վերաբերվում ամբողջ քաղաքակիրթ աշխարհը:

Ինչով և երբ են աշխատել ճեմարանի սաներին կապել նրանց դիտութեան աղբիւրի հետ, արդեօք ինչ տեսան նախկին ուսանողները և ինչ մխիթարական բան ենք տեսել մենք, որ կապւէինք այդ կրթական հաստատութեան հետ: Արդեօք նեղ-կուսակցական և շահադէտ տեսուչները պէտք է զարթեցնեն մեր մէջ քաղցր յիշատակներ դէպի ճեմարանը, թէ ապէտ թերուս վերակացուները, որ միայն ածականներով էին խօսում մեզ հետ, արդեօք մեր տեսած անկարգ ու անկանոն վարչութիւնը պէտք է ոգևորէ մեզ իր օրինական և եռանդուն գործունէութեամբ, թէ բարոյաբանութիւն և աստուածաբանութիւն փքուն անունների տակ անբարոյականութիւն. անտարբերութիւն և ապականութիւն ուանդող ուսուցիչները: Եթէ չը խօսենք այլ ևս բարոյական ապականութեան մասին, որ այդ հրէշաւոր վարիչների ղեկավարութեան արդասիքն է, Զեզ յայտնած կը լինինք ճեմարանի դրութեան ստեղարկած պատկերը:

ճեմարանի ատոդը, որ այնքան փայլում էր մեծ հիմնադրի օրով, մարեց այն րոպէին երբ նահապետականները իրենց նեխւած ուղղութեամբ ներս մտան՝ այդ հիմնարկութեան ղեկավարութեան գործը ստանձնելու. այն օրից հէնց սկսեց աշակերտների մէջ ատելութիւն և ուսանողների մէջ բուռն թշնամութիւն դէպի միմիանց և դէպի վարչութիւնը. մտաւոր դաստիարակութեան հետ նրանց աւանդեցին մեծերից նաև ապականութեան սերմերը: Այդ չարաբաղդ օրից սկսած հայութեան միակ բարձրագոյն կրթարանը դարձաւ կուսակցութեան խաղալիք և շահամոլ մարդկանց որջ: Այդ օրից սկսած՝ խրախուսվեց աշակերտների մէջ լրտեսութիւնը և այդ օրից ծագեց ընկերական անմեղ խօսակցութիւնների, կատակների և այլ անմեղ վարմունքների կեղտոտ դիտաւորութեամբ արձանագրելու և բարձր իշխանութեան հասցնելու սովորութիւնը, որ

ռոնք հաշիւների մէջ հատել, իրենց հոտով կարշեցնում են ազգ. գործերն անգամ։

Մեկնում եմ դէպի Էնզէլի։ Մի քանի տող կը գրեմ այնտեղից։

Փ.

ԲՈՒ ՆԱՄԱԿ

—

Թէհրան 8 յունիս 95

Անկեղծութիւնը, պարտուց և իրաւանց արդար պահանջը դեռ մեր մէջ կարգուած բաներ չին։

Այդ՝ ես փորձով գիտեմ իմ այս անցեալ ուսումնական տարւայ պաշտօնակատարութեան օրով։

Ամեն ոք գիտէ թէ մենք (ես և իմ պաշտօնակիցները) ինչ հանգամանքներում և կեանքի ինչ սուղ միջոցներով ջանադիր եղանք, առանց կեղծելու, պարզ ճակատ առ ճակատ դէմ դնելով, մեր ուսուցչական արդար իրաւունքները յարգել տալ մէկ տարւայ մէջ մի քանի անգամ փոփոխուած մի հոգաբարձութեան և խաժամուժ հասարակութեանը՝ որի համար և հալածանքի երթարկուեցանք, հեռացուցին և ատելի դարձանք նրանց աչքին։ Զնաս չունի, ատելի լաւ է զէշ լինել քան թէ.... Բայց կան արարածներ՝ այն էլ թունաւոր, որ ոչ թէ միայն իրենք այլ նրանց բոլոր գործերը մնասակար են ընկերութեան, կեղծելերկրպագութիւններ անել, ծնկաչոք և բազկատարած շնորհակալութիւններ անել. խորամանկութեան, կեղծաւորութեան և սուտ քաղաքավարութեան ամեն տեսակ նշաններ և ձևերն են որ կազմում են նրանց տրտաքինը, իսկ ներքինը... Ատուած հեռու պահէ, շողոքորթութիւնով, խաբեբայութիւնով, խարդախութիւնով, դաւադրութիւնով, մատնութիւնով և այլն և այլն նրանց ներքին օժտուած յատկութիւններ են կազմում։

Ահա այդ կարգի մարդիկն են ընդհանրապէս, որ՝ թէև ծանօթ իրենց յատկութիւններով, սակայն սէր և յարգանք են վայելում նոյն իսկ մեր հասկացողների մօտ, որոնք ակնածում են նրանցից, իրաւունք տալիս նրանց դիւական արարքներին, և փայփայում նրանց. կարծես թէ վախենում լինին նրանցից....

Խնդիրը փոխանորդ հօր Բաֆֆի կլուբը յաճախելն է, որ և մի քանի անդամներ ճաշակել էր արդէն նրա ինչ համ լինելը...

Մի քանի դառն փորձեր՝ օրինակ այդ սինլջչորների խումբը, երբ պէտք ունի նրանից, հովանաւորութեան, կամ որ և է մի խնդրի կարգադրութեան դէպքում, որ իրան ոյժից վեր է և այլն, նրան ընդունում են ոչ թէ միջնորդ, այլ իսկ ատուածացնում։ Ընդդիմութիւնը չափ չը կայ. իսկ դալով մի ընդհանուր հասարակական խնդրում, ոչ թէ չեն ընդունում նրա միջամտութիւնը մինչև իսկ վնասակար մի մարդ հրատարակում նրան, ազգային և եկեղեցական օրէնքները—իրաւունքները բռնարարող (violateur) և այլն. մէկ անգամ հովանաւորում է նրանց մի ինչ որ հանդիսին, փողի շահ կար մէջը չէ. այն կ մեծ փողի, մէկ բարձր ոսաճարաձև ամբիոն կրկրպագունների խումբ, խունկ, պատարագ պակաս չէին նրա համար։ Այդ զիշեր հայրը սուրբը սաստիկ զգածուած՝ արտասուելու ոսա էր։ Միւս օրը հովանաւորեց միւս ընթերցարանի մէկ երեկոյթին և խնդրեց երաժշտասիրաց ընկերութեան խմբին (որի օգտին արուած հանդիսին հէնց երեկ էր հովանաւորել) որ ինքն էլ մասնակցէր այդ երեկոյթին, այդ միջոցին երեկուայ երկրպագունները կինուցան նրա դէմ որպէս ամենասիրիմ հակառակորդներ և մերժեցին նրա խնդիրը. համոզիչ խօսքեր խրատներ ապարդիւն մնացին և իրանք էլ անդրդուելի։

Անցեալ օրեր նոյն խմբի օգտին էլի մի հանդէս կար. հէնց նոյն մարդիկ, որ առաւօտեան դանէ դաւոն փողոց փողոց ընկած ստորագրութիւններ էին հաւաքում նրա ձեռնարկութիւններին արգելք լինելու, կիշերը էլի ծնկաչոք, մի կարգ կանանց յատուկ ժպիտով, զրկաբաց ընդունում էին նրան հանդիսում և նա էլ բաղմում իր համար այն անդամանից ուելի չքեղ պատրաստած ամբիոնի վրայ (այդ անգամ էլ՝ նրանից մի քանի թուման զջելու տաիթը կար)։ Այդ հանդիսին ես ներկայ չէի, բայց հայր սուրբը էլի արտասուելու չափ զգացուած կը լինէր անշուշտ, որովհետև ես լսեցի երբ պիտի կարդացուէր «Գրախտի ընտանիքից» մի կտոր՝ նա՝ պատուիրեց նրա փոխարէն կարդալ «Ազնազանքից» մէկ ուրիշ կտոր։ Մի քանի այսպիսի դէպքեր, որոնք՝ սիրալիր ընդունելութիւն են գտնում մեր փորձառու փոխանորդից և իր ներկայութեամբ քաջալերում է նրանց, Միրանց դիրքի մէջ, ի մնաս իր, ուելի հաստատուելու։ Պիտի ասեն թէ, «ախր նա վարդապետ մարդ է Քրիստոսի աշակերտ է, պէտք է ներողամիտ լինի. խորութիւն չը գնէ և այլն և այլն» Պիտի ասեմ, հապա ինչու այդպէս չը վարուց իր պաշտպանած դպրոցի ուսուցիչների դէպքում, հարցրու թէ նա ոք էր կոխել Թէհրան, առանց նրանց հետ անմնուելու, ի մօտոյ ծանօթանալու այնպիսի մի լաւուած գրութիւն ոտանձնոց դասատուների դէմ, որ քիչ էր մնացել տարւայ վերջը, ամեն բան տակն ու վրայ լինէր։ Ես դեռ յիշում եմ և չեմ էլ կարող մոռանալ երբ մի ամբողջ տարի ռոճիկ չստացած՝ տարւայ վերջին օրերը գնում եմ տատանալու, այն էլ համաձայն իր խոստման, պատասխանում է, «քանի մ՚օր ալ սպասէ»։ Երբ քանի մ՚օր ալ չեմ ուզեր՝ սպասել և արդար բարկութեամբ պահանջում եմ կամ վճարի ինձ նոյն ժամայն և կամ անունս ուսուցչական ցանկի միջից ջնջէ՝ թէ ինչ ահեղազոչ ձայնով զոչում էր «ինչ պիտի ընես, ինչ է ձեր միտքը, կ՚ուզէք որ ես ալ օտար պէս վարիմ ձեզ հետ, օտար քայլեր առնեմ...» թէև այդ սպառնալիքները գործի չը գնացին և պարտաւորուց միւս օր վաղ առաւօտեան հէնց դպրոցում վճարել մեզ, սակայն մէկը չը կայ հարցնող թէ՝ հայր սուրբ «ինչ պիտի ընէիր» խեղճ վարժապետներին, որ քո և Յովհաննէս խանի քանդած դպրոցը. մի տարի ամբողջ կայուն վիճակի մէջ պահեցին, միթէ մէկը իր իրաւունքները պահանջելու համար պէտք են օտար քայլեր առնել նորա դէմ, այլ կերպ վարուել նորա հետ, բաս ինչու այդ քայլերը այն միւս մարդոց դէմ չես առնում որ գիշեր ցերեկ լարւում, սարքւում և ամեն տեսակ քալեր են առնում ձեզ մէջտեղից դուրս նետելու, ինչպէս և արին ձեր նախորդին, առաջնորդին։ Ես չեղուցայ. թէ ինչու նրանց հետ այլ կերպ չէ վարւում և մեզ հետ է վարվում, որովհետև մեզ մօտ չը կայ ամբիոններ, մենք չենք կարող լինել երկրպագուներ, մեր լեզուն սովոր չէ մէկ բառ անգամ շողոքորթութեան, այդ բոլորը գտնվում են միւս խմբի մէջ և եթէ այլ կերպ վարուէր նրանց հետ այդ պատիները կը խլուէր նրանից։ Երկրորդ՝ սովոր չենք մէկի սիրելի վերայ ծածուկ փսփսալ և ինտրիկներ սարքել, այլ ի լուր աշխարհի, պարզ աչքաբաց ասել երեսին թէ այս ինչ բանը սխալ է ինչու ես անում. այդ բանն էլ սաստիկ ատում է նա. մէկ էլ որ, նրանք չեն սովորել վճարել այլ միշտ պահանջել—ստանալ, և եթէ մէկը կը համարձակի իւր իրաւունքը պահանջել այն էլ խիստ լեզուով, այդ ժամանակ դու էլ՝ խռովարար ես և այլ կերպ պէտք է վարուիլ քեզ հետ։ Այս բոլորից երևում է որ հայրս սուրբը թէև հասկանում է բայց չի կարողանում զսպանել իր շուրջը եղած տիպերին. որպէս «խունկ մատուցողների» պետ՝ սիրում է միշտ խնկարկել և դիմում է (ակամայ) դէպի այն կողմը ուր խունկ կայ. պարզութիւն, անկեղծութիւն նրանց գործին՞ չը՞ գալ քանի որ իրանք կեղծում են Ատծու և մարդկանց առաջ։

Միքայէլ Ց. Եղիազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս համարից մեր գլխաւոր աշխատակիցը մեզ ուղղում է ճանապարհից նամակներ, որոնք Փ. ստորագրութեամբ տպագրելու ենք հետզհետէ։

—

Թէև մենք որոշել էինք, այլ ևս չը խօսել Շիրազայ եկեղեցապատկան կալուածների մասին, սակայն մեր այնտեղի թղթակցից եկած, անհերքելի ճշմարտութեամբ մի այլ նոր գրութիւնը, արիթ է տալիս մեզ նկատել և մեր թղթակցին պատասխանել թէ՝ ինչչարկ կայ ճշմարտութիւնը հանրագրութիւններով հաստատել, թէ եկեղեցական կալուածները կամ թէ նրանց արդիւնքները՝ երբէք չեն ծառայում իրանց որոշ նպատակին այլ ամենուրեք, կլանւում և վատնւում են ուտիչներից, ձրիարար գործածւում են պորտաբոյծ մարդկանցից և որջ են դառնում աղա—հարուստ կառավարիչների անասնական հաճոյքները լրացնող մէկ կարգի անձնաւորութեանց։ Թող չը զարմանայ մեր թղթակիցը եթէ ասենք, որ մի՞ քանի տասնեակ տարիներից ի վեր էլ, հէնց նոյն իսկ Թէհրանայ եկեղեցիներին պատկանող տները, շնորհիւ եկեղեցական վատթար վարչութեան՝ նոյն դրութեան մէջն են գտնւում։

—

«Նոր-Դարի № 90-ում կարդում ենք N-ի «Ատրպատականի դիմակաւորներ» մի յօդուածը, որի մէջ աչքի են զարկում հետևեալ տողերը «...և մանաւանդ մի խումբ «գործիչների» հետ, որոնք յայտնի դիտաւորութեամբ այսօր թմբուկ են զարնում Թէհրանի իմաստակ թերթի մէջ Աայլն» Որովհետև այդ գրողը մեզ ծանօթ մի անձնաւորութիւն է ուստի և չենք զարմանում նորա այդ կեղտոտ գրչից, որքան և չէինք զարմանում նորա հէնց Ատրպատականում արած կեղտոտութիւններից։ Թող շնորհակալ լինի նա նոյն իսկ այդ «իմաստակ թերթից», որ իրեն պէս մէկ շառլաթանին արտաքսել տալով Պարսկաստանից ուղարկեց իւր ամենաազնիւ բարեկամ «Նոր-Դարի» մօտ, որը ամենայն սիրով դէսից դէնից գըչլած ռուբլիները կը բաժանէ նրա հետ մինչև որ, մի ուրիշ «Ատրպատական» գտնուի։ Իսկ «Նոր-Դարի», նորա անգործութեան ժամանակ նորա վերայ ծախսած մի քանի ռուբլիների փոխարէն, մեր խմբագրութիւնից կը նուիրենք «Միրզա Իսկէանդար» շատ էնտերեսանի բրօշիւրը, որը կարող է որպէս մի պարզ հայելի ծառայել իր և իր աշխատակիցների համար։

—

Դովլաթա թաղի հայկական ուսումնարանը շարունակում է դեռ իր ուսումը. զարմանալի է. մէկ ամսից աւել է ինչ այդ վարժարանի քննութիւնները վերջացել են և ուսումը դեռ շարունակւում է... Կաթոլիկաց դպրոցներն էլ շարունակում են իրանց ուսումը; բայց նրանք պատրուակ ունին քննութիւն չը տուած լինելը. իսկ պ. Գասպարեանը ինչ պատրուակ ունի այս խաշուելու չափ շոքով ուսումները շարունակելու։ Բնական է մարդոց աչքերը թոզ փչելը։

—

Ռաշտից մեզ գրում են որ. «Այստեղ վերջացան երկսեռ դպրոցների քննութիւնները, ընդհանրապէս թէ աշակերտները և թէ աշակերտուհիները թոյլ էին։ Ժողովրդի խօսակցութեան առարկան է, թէ արդեօք էլի պէտք է ներկայ ուսուցիչը և ուսուցչուհին մընան իրենց պաշտօնում։ Անցեալ տարի ձեր թղթակիցը շատ գրեց, այս տարի էլ մենք կրկնում ենք, դպրոցները մեզ համար ոչինչ օգուտ չունին, եթէ ուսուցիչը և վարժուհին չը փոխուին և դպրոցը երկդասեանի չը վերածուի։

—

Կովկասի լրագիրներից քաղում ենք հետևեալը։ «Թոյլ է տրուած հիմնելու մի ընկերութիւն, որ խճուղի պիտի շինէ Էնզէլի ծովածոցից մինչև Ղազվին քաղաքն և պիտի շահագործէ Պարսկաստանում գտնուած ճանապարհների ամեն տեսակ հաղորդակցութիւններն ու նաւահանգիստներ։ Էնզէլի—Ղազվինի խճուղին ունենալու է 352 վերստ տարածութիւն և Ղազվինում կը միանայ այդ քաղաքից դէպի արևմուտք մինչև Թաւրիզ, դէպի արևելք՝ Թէհրանից մինչև Մեշեդ և դէպի հարաւ՝ մինչև Կում քաղաքը գոյութիւն ունեցող խճուղիների հետ։ Այդ ճանապարհը պէտք է վերջանայ 2 տարում, և 99 տարուայ ընթացքում ընկերութիւնը, «Բիրմ Վ..» ասելով, իրաւունք կունենայ առաձնին տուրք առնելու փուրգոններից, ոտով, ձիով և կառքով ճանապարհորդներից և եղջերաւոր կենդանիներից. այդ տուրքը որոշուած է պարսից կառավարութեան այդ ընկերութեանը տուած պայմանագրի մէջ։ Ընկերութեան հիմնական գրամագլուխը 1,000,000 ր. է 10,000 ակցիաների բաժանուած։ Ընկերութեան վարչութիւնը պիտի գտնուի Մոսկուայում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Մօտ օրերս Կովկասում անձնասպանութիւն գործեցին երկու հայեր: Առաջինը՝ ճեմարանի այն թշուառ սաներից էր, որոնք վերջերս, շրջնորհիւ զանազան խայտառակութիւնների թողել էին էջմիածինը և ամենաաղքատ դրութեան մէջ ապրում էին Թիֆլիսում: Այդ անձնասպանը աղքատ էր, տէրտէրներին տալու փող չէր թողել:

Երկրորդ անձնասպանը Դեմուրով անունով մի պարոն էր, որ ունէր հարուստ ազգականներ:

Հայ կրօնաւորութիւնը վճռում է զրկել առաջին թշուառին կրօնական ծէսով թաղումից, իսկ երկրորդին նա թաղում է:

Այս ակներև անիրաւութիւնը, շատ բնական էր, որ պիտէ շարժէր Կովկասի հասկացող դասի զայրոյթը և «Մշակը» իր մի համարում արտայայտում է այդ, թէև ոչ այնքան կծու կերպով, որպէս արժան էր անել: Եւ իրաւ, ինչ է նշանակում այդ անամօթ վարմունքը. մի աղքատ անձնասպանի համարում են ոչ արժանի պատուաւոր թաղման, իսկ մի հարուստի՝ ըստ ամենայնի արժանի:

Ինքնասպանութեան չը թաղել անձնասպանի, դա մի անմտութիւն է, հնացած մի նախապաշարմունք, որ շատ ուրիշ անմտութիւնների հետ, շարունակում է մնալ մեր եկեղեցական օրէնքների մէջ: Կրօնաւորութիւնը, ինչպէս և մի քանի դար առաջուց գիտութիւնը, հաստատում էին որ անձնասպանը խելքը գլխին է, կամովին է որ ինքն իրեն սպանում է. բայց անցան այն օրերը. բժշկական գիտութիւնը երևան հանեց որ անձնասպանը, անպատճառ մտային խանգարման է հասնում, երբ զործադրում է անձնասպանութիւնը: Սա փաստ է, ընդունված ամեն տեղ. մեր, հնութեան մէջ բորբոսնած կղերն է միայն, որ չէ կամենում իր 1000 տարի առաջուայ փտած օրէնքներից ձեռք քաշել, որ իր ընթացքով մերժում է պրօգրէսը, գիտութեան գիւտերը... Եւ նա, մէկ մէկու ետևից գործում է միայն անմտութիւններ: Ինչ բան, օրինակ. եւրոպական քրիստոնէութեան ազատամիտ մասի համար ծաղրելի օրէնք է եղել և արխիւային հասկացողութիւն,—դա մեր կղերի համար դեռ շարունակվում է լինել ամենասուրբ և ամենալաւ օրէնք: Բայց այդ բաւական չէ դեռ: Խենթին պատժելը չը բաւականանալով, նա սկսել է խարութիւն էլ դնել հարուստ և աղքատ խենթերի մէջ: Անիրաւութիւնը իր չափն ու սահմանը անց է կացնում արդէն: Վաղուց ի վեր է, որ հայ կղերը, կաշառելով եկեղեցուն տուած փողից, մինչև իսկ անբարոյականների է թաղում եկեղեցիների, վանքերի բակում, նրանց դիակներով հոտեցնում է քաղաքի մթնոլորտը, իսկ հասարակութեան համար յայտնի գործողներին չէ թոյլատրում այդ. որովհետև անբարոյականը, ոսկի բարձած էշը՝ ոսկի է դիզում կղերի առաջ, ոսկիով գնում այդ տեղը, իսկ հրապարակախօսը, գրագէտը ոսկի չունի նրան կաշառելու, Աստուծոյ արքայութիւնը հայ կղերից գնելու համար: Օրինակ կուզէք. այցելեցէք մի անգամ Թիֆլիսի Վանքի բակը և տեսէք թէ ինչ անձերի կը տէսնէք այդտեղ թաղուած, մինչ Բաֆֆիի, Արծրունու պէս անձերին հազիւ տեղ են տալ հեռու.—Խօջիվանք գերեզմանատան մի խուլ անկիւնում:

Մենք, ի հարկէ, թաղման, ծէսերի, տեղի և այլն և այլն կարևորութիւն տուողներից չենք, բայց թէ հարկաւոր է մաքուր պահել այդ տեսակ ցոյցերի բաշխման սկզբունքը:

Նոյնը պատահել է երկու անձնասպանների համար ևս. հարուստի համար փող ստանալով, աղօթել են նրա վրա, կրօնական ծէսով թաղել, իսկ աղքատը.... քար ուտի աղքատը, նրան մինչև իսկ մահից յետոյ էլ են արհամարհում:

Մի բոպէ մտածեցէք, որ կրօնաւորութիւնը չէ թաղել ճեմարանի սանին, աչքի առաջ ունենալով գուցէ, որ նա «ապստամբ» է ճանաչուած հայոց վ. Հայրիկից.... բայց իսկոյն ծիծաղեցինք այդ մտքի վրայ: Իսկապէս, եթէ կրօնաւորութիւնը այդպէս է մտածել, էլ ոչինչ չէ մնում անել, եթէ ոչ լռել: Խորին արհամարհութիւնը յաճախ լռելով է արտայայտվում:

Թշուառ, խիստ թշուառ ազգ ենք, որովհետև դեռ Միջին Դարի մէջ անգամ չենք մտել. իսկ վերածնութեան դարը, ըէֆորմի դարը,... դա մի ցանկալի, տոփալի երազ է առայժմ մեզ համար...

Վ.Փ.

ՀԵԴԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն. 6 յուն. (Ն. տ.) Ծէտտէյից հասած լուրերը հաստատում են որ մի ընդհանուր սարսափ է տիրում այնտեղ: Ժողովուրդը վախենում է որ Բէտուինները մէկ ընդհանուր յարձակում չը գործեն քաղաքի վերայ: Անգլիական նաւերի Ծէտտէ հասնելը, տաճիկների կողմից էլ մեծ ուրախութեամբ ընդունուեց, որոնք ևս երկիւղ էին կրում Բէտուիններից:

Լոնդոն. 8 յուն. Բարձրագոյն Դուռը բոլորովին չի մերժել և ընդունում է բարենորոգումներիանհրաժեշտութիւնը: Բ. Դուռը կընդիմանայ եւրոպական կառավարութեանց վերահսկողութեան ծրագրին:

Լոնդոն. 9 յուն. Թիւրքան փաշան, որ Ասիական նահանգների քննիչ յանձնաժողովի նախագահն է, յաջորդում է Սայիդ փաշային, արտաքին գործոց նախարարութեան մէջ:

Լոնդոն. 9 յուն. Սայիդ փաշան որոշուել է նախարարապետ (մեծ վիզիր):

Լոնդոն. 12. յուն. Ֆրանսիական ռուսական և անգլիական դեսպանները յայտագիր են ներկայացրել Բ. Դռան պահանջելով բէտուինների կինաթափ լինելը և վնասների փոխարինութիւն Ծէտտէյում եղած բարբարոսութիւնների համար: Բ. Դուռը պատասխանել է որ վերջին ծայր դժուարութիւն կայ բէտուիններների զինաթափ անելը:

Լոնդոն. 12 յուն. Հինգ ֆրանսիական բանքեր ստորագրել են Չինաստանի 15 միլիոն փոնտ ստերլինգի փոխառութեան պայմանը Ռուսաց կառավարութեան երաշխաւորութեան ներքոյ:

Լոնդոն. 16 յուն. Ռուսաց Կայսրը Ս. Անդրէյի պատուանշանը շնորհել է, Ֆրանսիոյ նախագահ Ֆէլիքս Ֆորին:—Անգլիական Կ. Պօլսոյ դեսպանը ընդունել է սուլթանի մի մասնաւոր խընդիր, ուստի նա միջոց է ուզում, որ սաճիկ նոր նախարարութիւնը կարողանայ լաւ ուսումնասիրել հայկական բարենորոգումների խնդիրը:

Լոնդոն. 17 յուն. Լուր է հասնում որ շաբաթ օրը Բ. Դուռը յանձնել է անգլիական, ֆրանսիական և ռուսական դեսպաններին մի նոր պատասխան, նրանց հայկական խնդրոյ վերաբերութեամբ արած դիմումին: Բ. Դուռը այժմ ընդունում է Հայաստանում ներմուծելիք բարենորոգումների գաղափարը երեք պետութեանց վերահսկողութեան ներքոյ. բայց առաջարկում է, որ այդ վերահսկողութեան ժամանակամիջոցը սահմանափակուի երեք տարով միայն:

Լոնդոն. 17 յուն. Լուր է տարածուել որ Բ. Դուռը մի պատասխան է ուղարկել կառավարութեանց այն պահանջին, որոնք արել են հայկական բարենորոգումների համար բայց պատասխանը անբաւարար է: Սուլթանը մի կարճ ժամանակ է խնդրել և այդ ևս ընդունուել է: Մակեդոնիայում յուզմունքը աւելանում է:

Փարիզ. 17 յուն. Այսօր ռուսաց դեսպանը ներկայացրեց հանրապետութեան նախագահին Կայսեր շնորհած ս. Անդրէյի պատուանշանը:

Լոնդոն. 18 յուն. Բ. Դռան պատասխանը կառավարութիւններին երէկ յանձնուեցաւ, պատասխանում ընդունում է բարենորոգումների գաղափարը, բայց խնդրում է բանակցել նրա մի քանի կէտերի վրայ, նա ուրանում է կառավարութեանց գրաւական պահանջելու իրաւունքը և յոյս է տածում որ սուլթանի բարձր իրաւունքները կը յարգուին: Բ. Դռան պատասխանը նրկատուում է որպէս մերժողական մի պատասխան:

„ՇԱՒԻՂԻ" ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Թէհրան. Արշակ Խ. Յարութիւնեան. Դու մնացիր մենակ հոգաբարձութեանը պատասխանող, բայց ճշմարիտ է այն տեսակ հոգաբարձութեան էլ քեզի պէս վնասուած և փչացած բարք ու վարքով աշակերտներ են պէտք որ ամօթ են բերում նոյն իսկ իրենց ծնողաց, բայց քո ծնողներդ էլ իրաւունք չունին քեզանից գանգատելու, քանի որ արժանաւոր ծնողաց արժանաւոր զաւակն ես:

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ և ԾԱԽՈՒՄ Է ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ

ՄԻՐԶԸ ԻՍԿԵԱՆԴԱՐ

(Պարսկական զրոյց)

ԳՐՔՈՅԿԸ

Գինն է 50 կոպ. կամ 3 դրան

2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԹԱՓԵԴԻ

„ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ"

Բ. ՏԻՊ

Գինն է 1 ր. 75 կ: Ճանապարհածախսով 2 ր.:

Դիմել՝ Тифлисъ. Аннѣ Раффи:

2—3

ՓՈՐԱՃՃՈՒԻ (որկոչվում է ժապաւինաւոր որդ) (Solitaire Tenia) **ԴԷՄ ԽԻՍՏ ԱԶԴՈՒ ԴԵՂ**

Փորձած «Շաւիղի» խմբագրութիւնից և զօրութիւնը երաշխաւորած: Դեղը 3—4 ժամուայ ընթացքում ԶԴՈՒՄ Է ՃՃՈՒԻ ԳԼՈՒԽԸ և լիովին ազատում նրանից: Ոչ մի լեղիութիւն չունի. հարկաւոր չէ ոչ լուծողական և ոչ էլ ծոմապահութիւն: Հարկաւոր եղած պատուէրները գրաւոր կերպով կուղարկվեն դեղի հետ: Դեղը փոշի է: ԳԻՆՆ Է ՄԷԿ թուման (2 ռուբլի): Դիմել Թէհրան, Մահտեսի Յորդանան Եղեազարեանցին. Téhéran (Perse) M. Hordanan Eliazarian: Պատուէրները կատարվում են անմիջապէս և խնամքով:

1—3

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ

ՀԱՅ

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ

Ծախվում են խմբագրութեանս մէջ

Գինն է Թէհրանում վեց դրան իսկ Պարսկաստանի օտար քաղաքների համար 8 դրան:

2—2